



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 845 - Ա

«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 148,418,463 դրամ արժողությամբ «Օրրան» օգնություն Հայաստանի կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 02552842) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Էյ-Ի-Ջի-Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00930884) հետ 2025 թվականի նոյեմբերի 17-ին կնքված՝ N Ե-243 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի

30-ն ընկած ժամանակահատվածում գազատար խողովակների և գազօգտագործվող սարքավորումների տեխնիկական սպասարկման և կարգաբերման ծառայությունների մատուցման գործարքը՝ 47,283 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2018 թվականի մարտի 20-ին կնքված՝ N 8263135 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՖԼԵՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 01808789) հետ 2025 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N 11/11/25-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բենզինի ձեռքբերում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 012.12.15.0546 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցման գործարքը՝ 3,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 00040569) հետ 2024 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N AT-AU-141-24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունների և դրանց կից ծանոթագրությունների աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ՍԱՍ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 02538542) հետ 2021 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված՝ N AR 010122 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում սննդամթերքի ձեռքբերման գործարքը՝ 41,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N 07-0012-6-1 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման գործարքը՝ 360,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ԱրմենՏել» համատեղ ձեռնարկություն փակ բաժնետիրական ընկերություն) (ՀՎՀՀ՝ 02500052) հետ 2004 թվականի հունիսի 17-ին կնքված՝ N 010309530 51/3162/4682 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության («Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերություն) (ՀՎՀՀ՝ 01551651) հետ 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N 74556 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական կապի ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Ոսկե գագաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 01235765) հետ 2025 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում խոհանոցային սարքավորումների, պարագաների

և նյութերի ձեռքբերման գործարքը՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Դարոյնք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 01220854) հետ 2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքված՝ N 16 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում թխվածքաբլիթի և վաֆլիի ձեռքբերման գործարքը՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան